ԿԱՅԾԱԿՆԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐ՝
ՆՎԻՐՎԱԾ ԱՐՍԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ս.թ. հուլիսի 14-ին, ժամը 18:00-ին Հայաստանի շախմատի ակադեմիան «Շախմատի ակադեմիայի ակումբի» հետ համատեղ կազմակերպում են շախմատի կայծակնային մրցաշար՝ նվիրված միջազգային գրոսմայստեր, Հայաստանի վաստակավոր մարզիչ **Արսեն Եղիազարյանի** հիշատակին, որը տեղի կունենա Հայաստանի շախմատի ակադեմիայում (ք. Երևան, Շևչենկո 34):

Մասնակիցներ

Մրցաշարին կարող են մասնակցել առնվազն երկրորդ շախմատային կարգ ունեցողները: Մրցաշարը կանցկացվի շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով՝ համաձայն ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների: Մրցաշարում կհաշվարկվի միջազգային (ՖԻԴԵ) կայծակնային վարկանիշ:

Մրցաշարի մասնակիցները պետք է պարտադիր ունենան **ՖԻԴԵ-ի նույնականացման համար /FIDE ID/: ՖԻԴԵ-ի նույնականացման համար** չունենալու դեպքում մինչև հուլիսի 10-ը դիմեք Հայաստանի շախմատի ֆեդերացիա կամ այցելեք հետևյալ հղումով՝ **https://chessfed.am/am/fide-registration-form**:

Ժամակարգ

3 րոպե ամբողջ պարտիայի համար՝ յուրաքանչյուր քայլի համար 2 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Լրացուցիչ ցուցանիշներ

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակները չեն կիսվում, իսկ տեղերը կորոշվեն. հատված Բուհգոլցով, այնուհետև Բուհգոլցով, անձնական հանդիպումների արդյունքի /արդյունքների/ և սև գույնով խաղացած պարտիաների քանակով:

Մրցանակային ֆոնդ

Մրցանակային ֆոնդը՝ մուտքավճարների 60%-ը:

Մրցանակներ	
Հիմնական	**Հատուկ**
I	Լավագույն արդյունք ցույց տված **շախմատիստուհի**
II	Լավագույն արդյունք ցույց տված մինչև **14 տարեկան մասնակից**
III	Լավագույն արդյունք ցույց տված մինչև **12 տարեկան մասնակից**

IV	Լավագույն արդյունք ցույց տված մինչև **12 տարեկան աղջիկ մասնակից**
V	Լավագույն արդյունք ցույց տված մինչև **10 տարեկան մասնակից**
	Լավագույն արդյունք ցույց տված մինչև **10 տարեկան աղջիկ մասնակից**

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ստանալու միայն մեկ մրցանակ:

- Մրցանակները **կշնորհվեն, եթե** յուրաքանչյուր տարիքային խմբում լինի առնվազն 2 շախմատիստի մասնակցություն

Մուտքավճար

Կոչում/գործակից	Մուտքավճար
ՄԳ, ՄՎ, ԿՄԳ, ԿՄՎ	Անվճար
2101 և բարձր բլիցի վարկանիշ ունեցող մասնակիցներ	4 000 ՀՀ դրամ
I և II կարգ – 2100 բլիցի վարկանիշ ունեցող մասնակիցներ	5 000 ՀՀ դրամ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ - Հիշեցնում ենք, որ մրցաշարի մասնակիցների գրանցումը կատարվում է օնլայն տարբերակով մինչև **հուլիսի 11-ը, 15:00-ն**: Հայաստանի շախմատի ակադեմիայի կայքէջում **https://www.chessacademy.am/** անհրաժեշտ է սեղմել **ԳՐԱՆՑՎԵԼ** կոճակը, լրացնել բոլոր դաշտերը և կատարել վճարումը:

Բանկային քարտի բացակայության դեպքում մասնակցության վճարները կարող եք փոխանցել «Շախմատի ակադեմիայի ակումբ»-ի հետևյալ հաշվեհամարին՝

Շահառու՝ «Շախմատի ակադեմիայի ակումբ» ՍՊԸ

Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ

Հ/հ՝ 1570091773770100

Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել մրցաշարը, մասնակցի անունը, ազգանունը և հայրանունը, ծննդյան տվյալները, կարգը, մարզիչը և կոնտակտային հեռախոսահամար:

Հեռախոսահամար՝ **010-448479,044-998088:**

Գրանցումը հաստատվում է վճարումը կատարելուց հետո: